

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿՈՍՏԻԿՅԱՆ ԶՐԻՍՏԻՆԵ ՊԵՏՐՈՍԻ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՎԱԿԵՐԱԳՐԵՐԸ ՀԱՅՈՑ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԴԲՅՈՒՐ
(XVII ԴԱՐԻ II ԿԵՍ - XIX ԴԱՐԻ I ԿԵՍ)

Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն»
մասնագիտություն
պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2017

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ
արևելագիտության ինստիտուտում:

Պաշտոնակատարողը ներդրում ավտոսններ՝ պատմական
գիտությունները ներդրում է գիտությանը, պրոֆեսոր,
պրոֆեսոր Մարգարյան Յ.Գ.

պատմական գիտությունները ներդրում է գիտությանը, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Խառատյան Ա.Ա.

պատմական գիտությունները ներդրում է գիտությանը,
Հակոբյան Ա.Յ.

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական
համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2017 թ. դեկտեմբերի 19-ին,
Ժամը 14⁰⁰ին, ՀՀ ԳԱԱ պատմություն և ինստիտուտում գործող
ՀՀ ԲՈՅ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի
նիստում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությունը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ
պատմության և ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. նոյեմբերի 14-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունները թեկնածու, դոցենտ
Մուրադյան Յ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը

Մատենադարանի պարսկերեն վավերագրերը արժեքավոր
տվյալներ ու տեղեկություններ են պարունակում XVI դարից
մինչև XIX դարի I կեսն ընկած ժամանակաշրջանի տարբեր
փուլերում իրանական տիրապետության պայմաններում հայ
ժողովրդի ու Հայոց եկեղեցու սոցիալ-տնտեսական ու

իրավաքաղաքական դրուժյան վերաբերյալ: Նրանց փաստագրական նյութը լրացնում, ճշգրտում ու հարստացնում է հայոց պատմության բազմաթիվ հարցեր: Մատենադարանի XVII դարի II կես - XIX դարի I կեսի պարսկերեն վավերագրերի տվյալների քննությունը հնարավոր է դարձնում հայ ազգի տության ու հատկապես Յայոց եկեղեցու նշված շրջանի պատմության տարաբնույթ հարցերի համակողմանի ու սաքանումը: Այդ տվյալները բացահայտում են հայ-իրանական փոխհարաբերությունների պատմության խորքային հարցերին վերաբերող իրողություններ, որոնք կարևոր են այդ հարաբերությունների լիարժեք ըմբռնման ու արժևորման համար:

Հիշյալ վավերագրերի տվյալների քննության հիման վրա տեսանելի են դառնում շիամահմեդական աստվածաբանության ու իրավագիտության տեսակետները իրանական տիրապետության պայմաններում հայ-քրիստոնյաների ու Յայոց եկեղեցու իրավունքների մասին, դրանց պաշտպանության ուղիները, նրանց հարկային ու այլ պարտավորությունները իշխանությունների նկատմամբ: XVII դարի II կես - XIX դարի I կեսի պարսկերեն վավերագրերի տեղեկությունները հիման վրա բացահայտվում է հայ ժողովրդի հանդեպ իրանական իշխանությունների վարած քաղաքականության հիմնական միտումները պատմական հիշյալ ժամանակաշրջանի տարբեր փուլերում, նաև տեղական պաշտոնեության բռնած դիրքորոշումը հայությանը վերաբերող գանազան հարցերի անչունջամբ: Ատենախոսության մեջ քննվող վավերագրերի հաղորդումները արդիական նշանակություն ունեն նաև իրանական տիրապետության շրջանում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Գանձասարի կաթողիկոսության ու հայոց նշանավոր վանքերի՝ Տաթևի, Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկայի, Մակվի Ս. Թադեի ու Ազուլիսի Ս. Թոմա Առաքյալի վանքերի պատմության որոշ հարցերի, մասնավորապես, նրանց հոգևոր առաջնորդների գործունեության ու կալվածատիրական ունեցվածքի ու սուլմնասիրության համար:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի բազմաթիվ հանդակ նյութը հնարավորություն է տալիս նոր մանրամասներով հարստացնել XVII դարի II կես - XIX դար I կեսի այլ աղբյուրների հաղորդումներն Իրանի ու Նրա տիրապետության տակ գտնվող հայկական տարածքների ներքին սոցիալ-տնտեսական հարցերը կարգավորող մեխանիզմների, գործող օրենքների ու դրանց գործադրման միջոցների մասին, լրացնել սոցիալ-տնտեսական ու վարչական եզրույթների մեկնաբանությունները:

Դիտարկվող ժամանակահատվածի վավերագրերի տվյալների քննությունն ու դրանց հիման վրա կատարվող

Եզրահանգում մենք ը իրանահպատակ հայ ու թյան իրավա-
քաղաքական ու սոցիալ-տնտեսական դրու թյան հարցերի
շուրջ մեծ կարևորություն ունեն տեղի հայ համայնքի
անցյալի ու ներկայի դրու թյան մասին հստակ պատկերացում
ունենալու, ինչպես նաև արդի փուլում հրանի հետ
միջպետական փոխարաբերությունների ներքին շերտերի ու
զարգացման ուղիները հասկանալու համար:

Արևելյան Հայաստանի հայկական բնակավայրերի
պատմությանն առնչվող պարսկերեն վավերագրերում
պահպանված տեղանվանական տարբերակներն արտացոլում են
օտարահունչ անվանումների առաջացման պատճառներն ու
հանգամանքները՝ մատնանշելով նրանց կապը այլալեզու
հարևանների ընկալումների և մամեղական
իշխանությունների լեզվահնչյունական
նախապատվությունների հետ, այլ ոչ բնակավայրերի էթնիկ
կազմի հետ: Որոշակի տվյալներ բովանդակելով օտար
անվանումներով հանդես եկող բնակավայրերի հայկական
բնակչության սոցիալ-տնտեսական դրու թյան զանազան
հարցերի վերաբերյալ՝ այս փաստաթղթերն ինքնին
հանդիսանում են նրանց էթնիկ կազմի հայկական լինելու
հիմնավոր ապացույցներ, որոնք հերքում են օտար
անունների վրա հենվող աղբյուրների կեղծարարների
շահարկումները այդ բնակավայրերի բնակչության
վերաբերյալ:

Աշխատանքի նպատակն ու խնդիրները

Սույն առնախոսությունը նվիրված է Մատենադարանի
XVII դարի II կես - XIX դար I կեսի պարսկերեն վավերագրերի
բովանդակած պատմական բազմաբնույթ տվյալների
ընդհանրական բնութայնը՝ առանձնացնելով ու
արժևորելով դրանք ըստ իրենց սոցիալ-տնտեսական, իրավա-
քաղաքական ու պատմա-աշխարհային բնույթի
տեղեկությունների:

Այս նպատակով առնախոսության մեջ մեր առջև խնդիր
ենք դրել՝

- ընդհանրացնելով հայագիտության մեջ պարսկերեն
վավերագրերի օգտագործման փորձը և հենվելով նրա
ձեռքբերումների վրա՝ ուսումնասիրել, խմբավորել ու
համակարգել Մատենադարանի վավերագրերի տվյալները,
վերհանել նրանց առանձնահատկությունները,

- ընդգրկված վավերագրերի ու զուգահեռ այլ
աղբյուրների տվյալների համարմամբ ուրվագծել
Մատենադարանի պարսկերեն վավերագրերի հավաքածուի
հետազոտվող մասի նմուշների ստեղծման ու հավաքման
պատմությունը,

- քննել ու ներկայացնել այդ վավերագրերի տվյալները իրանահպատակ հայ ության իրավաքաղաքական կարգավիճակի, նրա սոցիալ-տնտեսական ու քաղաքական պատմության ուրուշ հարցերի ու իրողության ունենրի մասին,

- հետազոտել ու արժևորել ուսումնասիրվող վավերագրերի տեղեկության ունենրը Հայոց եկեղեցու ու հայկական վանքերի իրավաքաղաքական և սոցիալ-տնտեսական դրության գանազան հարցերի, ներքին ուրուշ խնդիրների շուրջ,

- ուսումնասիրել տարբեր ժամանակահատվածներում Մատենադարանի պարսկերեն վավերագրերի և հատկապես հրովարտակների գրության սկզբունքները, նրանց լեզվաոճական ու կառուցվածքային առանձնահատկության ունենրը, նրանց վրա առկա գրանցումների բնույթն ու նշանակությունը,

- հետազոտել հայաբնակ վայրերի անվանումները պարսկերեն վավերագրերում, նրանց ծագման բնույթն ու պատմության ունենրը:

Ուսումնասիրության ժամանակագրական շրջանակները

Հետազոտության ունեն ընդգրկում է Մատենադարանի XVII դարի II կես - XIX դար I կեսի պարսկերեն վավերագրերը, ուրուք նախկինում հատուկ ուսումնասիրության առարկա չեն եղել և նրանց բովանդակած պատմական նյութն ու տվյալները հիմնականում դուրս են մնացել գիտական շրջանառության ունից: XVII դարի երկրորդ կեսը նշանավորվում է Սեֆյան շահերի կողմից կրոնական փոքրամասնության ունենրի ու մասնավորապես հայերի նկատմամբ տարվող ներքին քաղաքականության հիմնական ուղղվածության ձևավորմամբ, ուր առանց նշանակալի փոփոխության ունենրի շարունակվում է մինչև XIX դարի կեսերը՝ արտացոլվելով իրանահպատակ հայերին տրված հրամանագրերում ու այլ պարսկալեզու փաստաթղթերում:

Հետազոտության մեթոդաբանության ունեն

Աշխատանքի մեթոդաբանական հիմքը Մատենադարանի XVII-XIX դարերի պարսկերեն վավերագրերի աղբյուրագիտական վերլուծության ունեն է, ուրի ընթացքում փորձել ենք այլ աղբյուրների հաղորդումների հետհամեմատելով, արժևորել հետազոտվող վավերագրերի բովանդակած տեղեկության ունենրն ու տվյալները հայագիտության ու իրանագիտությանը վերաբերող տարբեր հարցերի առնչությունը:

Աշխատանքի գիտական նորույթն ու գործնական նշանակությունը

Մատենադարանի XVII դարի II կես - XIX դար I կեսի պարսկերեն վավերագրերի հարուստ տվյալների օգտագործումը հնարավորություն է տվել նորովի մոտեցում ցուցաբերել նախկինում բավարար չափով չմեկնաբանված պատմական իրողություններին ու բացահայտել որոշ մանրամասներ: Մասնավորապես, հիշյալ պարսկերեն վավերագրերի տվյալների բազմակողմանի քննությունն ու համադրումը այլ աղբյուրների տեղեկությունների հետ թույլ էն տվել հստակություն մտցնել տվյալ ժամանակահատվածում իրանական տիրապետության տակ ապրող հայության ու Յայոց եկեղեցու իրավաբաղապական ու սոցիալ-տնտեսական դրությունը, հայ-իրանական փոխարաբերությունների պատմությունը վերաբերող մի շարք հարցերում: Այդ հարցերից են՝

- Իրանահպատակ հայ գիմմիների իրավունքներն ու պարտականությունները դիտարկվող ժամանակահատվածում, դրանք կարգավորող հիմնական օրենքներն ու վարչաբաղապական մեխանիզմները, դրանց ծագման ակունքներն ու ժամանակի ընթացքում կրած փոփոխությունները,

- Իրանական տիրապետության ներքո ապրող հայության, նաև Յայոց եկեղեցու իրավունքների հարցում ծագած խնդիրների բնույթը, երևան գալու պատճառները ու դրանց կարգավորման ուղիները,

- Յայոց եկեղեցու ու նրա նվիրյալների, նաև Նոր Ջուղայի ազդեցիկ հայության դերը իրանական իշխանությունների հետ փոխարաբերություններում և հայության ու հայոց վանքերի կենսական շահերի պաշտպանության գործում,

- Առավել լիարժեք գնահատական տալ ընդգրկված ժամանակաշրջանի տարբեր փուլերում իրանահպատակ հայության ու Յայոց եկեղեցու նկատմամբ վարվող շահական քաղաքականության հիմնական ուղղվածությանն ու ներքին ծախքերին:

- Բացահայտվում են Յարավային Կովկասի շուրջ ռուս-իրանական հակամարտության սրման շրջանում հայության տարբեր հատվածների ու Յայոց եկեղեցու քաղաքական դրությունը վերաբերող որոշ իրողությունները և այդ հակամարտության ազդեցությունը հայ-իրանական փոխարաբերությունների վրա:

- Քննվող վավերագրերի տվյալների հիման վրա նոր մանրամասներով է հարստացվել հայ ազնվականության ու մելիքական տոհմերի պատմությունը: Պարզաբանումներ են կատարվել հայ մելիքների քաղաքական վարքագծի ու կողմնորոշման դրդապատճառների և այդ խնդիրներում արտաքին գործոնների դերի վերաբերյալ:

- Մատենադարանի պարսկերեն վավերագրերի հարուստ հավաքածուն ի բնագրագիտական վերլուծությանը թույլ է տվել մանրամասն քննել և նոր դիտարկումներով ու պարզաբանումներով հարստացնել տվյալ շրջանի պարսկերեն փաստաթղթերի տեսակների կառուցվածքի ու լեզվա-ոճական ամանձնահատկություններին, որոշ եզրույթներին ու սուլ մնասիրության միջագային փորձը:

- Ատենախոսության մեջ նորովի մեկնաբանությանը պարզաբանումներ են կատարվում վավերագրերում հիշատակվող տեղանունների բովանդակային նշանակության, ստուգաբանության ու ծագման պատմամշակութային իրողություններում:

Ատենախոսության փորձաքննությունը

Ատենախոսությունը քննարկվել ու հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Արևելյան աղբյուրագիտության ու պատմագրության բաժնի կողմից: Ուսումնասիրության հիմնական դրույթները լուսաբանվել են հեղինակի հրատարակած երկու մենագրություններում, 21 հոդվածներում և հանրապետական ու միջագային գիտաժողովներում ներկայացված գեկուցումներում:

Հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը

Ատենախոսության մեջ քննվող վավերագրերի մի մասի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին վերաբերող պարսկերեն հրովարտակաների ու կալվածագրերի ուսումնասիրությանը XVIII դարում զբաղվել է Սիմեոն Երևանցի կաթողիկոսը, ով նրանց հիման վրա մանրամասն հետազոտել է վանքի կալվածատիրության պատմությունը իր «Ջամբռ» աշխատության մեջ և հիմնականում ճիշտ ներկայացրել նրանց հակիրճ բովանդակությունը:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերից ընդամենը մի քանիսը ուսումնասիրվել ու հրատարակվել են Ս. Ջալալյանի¹, ու Մ. Սմբատյանցի² աշխատություններում:

Մատենադարանի XVII դարի Ուկեսի հրովարտակաների մի մասը ուսումնասիրվել և օգտագործվել է Արևելյան Հայաստանի ազգային հարաբերություններին նվիրված Հ. Փախալյանի

¹ Սարգիս Ջալալեանց, ճանապարհորդութունն ի Մեծն Հայաստան, Մասն Բ, Տիփլիս, 1858, էջ 480-498:

² Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանց, Նկարագիր Սուրբ Ստեփանոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտաւորաց, եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից որք ՚ի Շամախոյ թեմի, Տիփլիս, տպարան Սովսէս Վարդանեանցի, 1896, էջ 225:

հետագոտու թյան մեջ³: Հայ ագիտության մեջ մինչև վերջին ժամանակներս շրջանառվում էր հիմնականում Մատենադարանի պարսկերեն վավերագրերի տվյալների չնչին մասը՝ մատչելի լինելով վերը նշված աշխատության ունենում և վավերագրական նյութերում երբեմն անկաթարգմանական տարբերակներով:

Մեր աշխատանքները պարսկերեն վավերագրերի ուսումնասիրության ուղղությամբ սկսելով 2001 թվականից՝ XVII - XVIII դարերի 145 պարսկերեն հրովարտական երկերը, հայերեն ու անգլերեն թարգմանության մեջ, առաջաքանով ու ծանոթագրություններով, հրատարակեցինք Մատենադարանի պարսկերեն հրովարտական երկերի հաջորդական երրորդ ու չորրորդ պրակներում: Բացի այդ, ամսածին հոդվածներում ուսումնասիրել և հրատարակել ենք շուրջ երկու տասնյակի հասնող այլ պարսկերեն փաստաթղթեր ու հրովարտական:

Աղբյուրների ու գրականության համառոտագրություն

Ատենախոսության մեջ ուսումնասիրվել ու հաշվի են առնվել Մատենադարանի արխիվային միջանի ֆոնդերում ու արաբատառ ձեռագրերի հավաքածուի մեջ պահվող բոլոր XVII դարի և կեսից XIX և կեսի պարսկերեն վավերագրերը⁴, տարբեր հարցերի քննության ժամանակ ներգրավվել են նրանց հաղորդումները՝ ճշտվելով ու արժևորվել ժամանակաշրջանի այլ աղբյուրների տեղեկությունների հետ պատմա-համեմատական վերլուծության միջոցով:

Աշխատանքում ներառել ենք նաև թվով շուրջ 700 այն վավերագրերը, որոնք ընդգրկված լինելով Կաթողիկոսական դիվանի 1Է ու 1ը թղթապանակներում, որպես վավերագրեր 1033-1470, 1471-1788, երբևէ մշակված ու նկարագրված չեն եղել և մատչելի չեն եղել ուսումնասիրողներին:

Պարսկերեն վավերագրերի ուսումնասիրման, նրանց բովանդակած պատմա-փաստագրական տեղեկությունների արժևորման ու օգտագործման սկզբունքները մշակելիս և պատմական տարբեր հարցերը քննելիս կարևոր ենք համարել այդ բնագավառում տարբեր ուսումնասիրողների փորձի հետ ծանրանցումը և պարսկերեն վավերագրերի այլ հավաքածուների հրատարակության ունենում և անկա տվյալների օգտագործումը: Մեր համար այս բնագավառում ուղեցույցի դեր են կատարել և մեծապես օժանդակել Յ.

³ А. Папазян, Аграрные отношения в Восточной Армении в XVI- XVII веках, Ереван, 1972.

⁴ Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 1ա-1ե, 1գ-1ը, վավ. 30-828, 869-1787; թղթ. 2ա-2բ, վավ. 25-379; թղթ. 4, վավ. 1-150; Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 18-136; արաբատառ ձեռ. ֆոնդ, ձեռ. 272, 357, 358:

Փախազյանի հետազոտությունները և վավերագրերի շարքի հրատարակությունը երեք արականերով⁵:

Ատենախոսության գլուխներում պարսկերեն վավերագրերի պատմության ու բովանդակության քննության համար ներգրավել ենք հայերեն, անգլերեն, պարսկերեն ու թարգմանական տարբերակներով մատչելի տարալեզու այլ աղբյուրների հաղորդումներն ու տվյալները:

Հայկական աղբյուրներից մեր աշխատանքում օգտվել ենք հայ պատմիչներ Առաքել Դավրիժեցու, Եղիա Կարնեցու, Չաքարիա Ագուլեցու, Չաքարիա Քանաթեռցու, Եսայի Հասան-Ջալալյանցի, Աբրահամ Կրետացու ու Մ. Չամչյանի պատմագրական երկերից⁶: Օգտագործել ենք Դիվան Հայոց պատմության շարքում ընդգրկված Ամենայն հայոց կաթողիկոսների նամակագրության ու այլ վավերագրերի նմուշների տվյալները⁷: Ատենախոսության մեջ Հայոց եկեղեցու ու Նոր Ջուղայի դերը իրական իշխանությունների հետ փոխհարաբերություններում և ուսաբանելու նպատակով ներգրավել ենք այդ հարցի ուսումնասիրության համար մեծ արժեք ներկայացնող Սիմեոն Երևանցու, Մ. Օրմանյանի, Յ. Տեր-Հովհանյանի, Ալ. Երիցյանի, Յ. Շահխաթունյանի, ու Վ. Ղուկասյանի հետազոտությունները⁸: Հայկական բնակավայրերի

⁵ А. Папазян, և Վ. աշխ., 1972. Յ. Փախազյան, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, Հրովարտակներ, արակ Ա, Բ, Երևան, 1956, 1959, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, II, Կալվածագրերը, արակ Ա, Երևան, 1968:

⁶ Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխ. Լ. Ա. Խանլարյանի, Երևան, 1990, Եղիա Կարնեցի, Դիվանը, աշխ. Ա. Գ. Աբրահամյանի, Երևան, 1968, Չաքարիա Ագուլեցու որագրությունը, Երևան, 1938, Չաքարիա Սարկավազ, Պատմություն, հ. Բ, Վաղարշապատ, տպ. Սրբոյ կաթողիկե Էջմիածնի, 1870, Եսայի Հասան Ջալալեանց, Պատմութիւն Համառօտ Աղուանից երկրի, Երուսաղեմի տպարանի Առաքելական Աթոռոյ Ս. Յակովբեանց, 1868, Աբրահամ Կրետացի, Պատմութիւն, Երևան, 1973, Չամչյան, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1984:

⁷ Դիվան Հայոց պատմության, գիրք Գ., Ը, Սիմեոն Կաթողիկոսի Յիշատակարանը, Թիֆլիս, 1894, 1908, Ղուկաս Կարնեցի, Դիվան հայոց պատմության, կազմեց Վ. Գրիգորյանը, գիրք I, հատոր Ա, Բ, Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1984, 2003:

⁸ Յ. Տեր Յովհանեանց, Պատմութիւն Նոր Ջուղայու որյ Ասպահան, հ. Ա, Բ, Նոր Ջուղա, տպ. Ամենափրկչեան Ս. Վանաց, 1880, 1881; Մ. Արք. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, Գ, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 2001; Ա. Դ. Երիցեանց, Ամենայն հայոց կաթողիկոսությունը եւ Կովկասի հայք XIX դարում, մաս Ա (1800 - 1832), Թիֆլիզ, 1894; Յ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն կաթողիկե Էջմիածնի և հինգ Գառացն Արարատայ, հ. Ա, Բ, Էջմիածին, 1842; Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Երևան, 2003; V. Ghougassian, The Emergence of the Armenian Diocese of New Julfa in the 17th Century, Columbia University, 1995.

անվանումներին ու պատմությանը վերաբերող հարցերի ուսումնասիրության համար արժեքավոր հետազոտությանը ունենալիքի շարքում անփոխարինելի են Ղ. Ալիշանի ու Մ. Բարխուդարյանցի աշխատությանը ունենալը⁹:

Հայոց մելիքների պատմությանը վերաբերող պարսկերեն վավերագրերի տեղեկությունները արժևորման համար ընդգրկել ենք նրանց պատմությանը վերաբերող աղբյուրները՝ վիմագիր արձանագրությունների, հայերեն ձեռագրերի հիշատակարանների, տարբեր վավերագրական ժողովածուների մեջ հրատարակված փաստաթղթերի ու պատմագրական երկերի տվյալները¹⁰, նաև Գեղարքունիքի ու Արցախի մելիքությունների պատմությանը նվիրված ուսումնասիրությունները¹¹:

Իրանական պետությանը հայառակ հայ-գլիմֆիների իրավաբար պարսկան կարգավիճակի հիմքում տեսնելով դեռևս վաղ արաբական խալիֆայության շրջանում այլակրոնների հետ մոլեհամար մարգարեի ու Իմամ Ալիի անուններից կնքված հրովարտակ-պայմանագրերը՝ նախ և առաջ աղբյուրագիտական վերլուծության ենթ ենթարկել նրանց տպագիր ու անտիպ

⁹ Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, Ս. Ղազար, 1890, Ղ. Ալիշան, Արցախ, Երևան, 2003: Մ. Եպս. Բարխուդարյանց, Աղուանից երկիր եւ դրացիք, Արցախ, Երեւան, Գանձասար աստուածաբանական կենտրոն, 1999:

¹⁰ Դիվան հայ վիմագրության, արակ IV, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան 1973; արակ V, Արցախ, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1982; Հայերեն ձեռագրերի ժեղարի հիշատակարաններ, հ. Ա (1601-1620թթ.), հ. Գ, Երևան, 1974, 1984; Присоединение Восточной Армении к России, ред. Ц. Агаян, т. 1, 2, Ереван, 1972, 1978; Тбилисская коллекция персидских фирманов, т. II, подг. М. Тодуа, К. Шамс, Тбилиси, 1989; Акты, собранные Кавказской археографической комиссией (АКАК), т. I- VIII, Тбилиси, 1866- 1881, Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. 2, ч. I, II, сост. П. Арутюнян, С. А. Тер-Авакимова, Ереван, 1964, 1967. Армяно-русские отношения, т. 4, сост. А. В. Алексанян, В. М. Мартиросян, М. Г. Нерсисян, П. А. Чобанян, Ереван, 1990.

¹¹ Գ. Շերմազանեան, Նիւթեր ազգային պատմութեան համար. Երեւելի հայկազունքի Պարսկաստան, Ռոստով, 1890, էջ 124-125; Կ. Տեր-Մկրտչյան, Նիւթեր հայ մելիքութեան մասին, Բ. Պրակ, Դօփեանք եւ Մելիք Շահնազարեանք, Ս. Էջմիածին, 1914; Մ. արք. Սմբատանց Նախիջևանցի, Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի որայ ժմ Նոր Բայ ազիտ գաւառ, Վաղարշապատ, 1895; Մ. Հասրաթյան, Պատմահնագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1985; Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Բ, Երևան, 1959; Ֆ. Պողոսյան, Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները, Բանբեր Հայաստանի արխիվների, 1966, № 1, էջ 197-208; Ա. Մաղալյան, Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ., Երևան, 2007, էջ 158:

պարսկերեն տարբերակները¹² համեմատելով նրանց բովանդակային ամանձնահատկությունները արաբերեն ու հայերեն օրինակների հետ¹³: Այդ վավերագրերը դիտարկվել են՝ ելնելով նրանց ստեղծման հետ կապված պատմական իրողություններից ու հանգամանքներից, մահմեդական իրավագիտության հետ նրանց առնչությունից ու խաղացած դերից: Ուսումնասիրվել են իայ պատմիչների, մասնավորապես Ղևոնդի, Սամուել Անեցու երկերում¹⁴ ցրված տեղեկություններ հիշյալ դաշնագրերի մասին ու հայ ուսումնասիրողների՝ Բ. Կյուլեսերյանի¹⁵, Տ. Սավայանյանի¹⁶, Յ. Անսայանի¹⁷, Ս. Դադոյանի¹⁸, ու Գ. Մկրտումյանի¹⁹ հետազոտություններն այս բնագավառում:

Իրանահպատակ հայության դրույթյան հարցերի բնույթյան ժամանակ Մատենադարանի պարսկերեն վավերագրերի տվյալները գուգակցել ենք մահմեդական իրավագիտությանը վերաբերող սկզբնաղբյուրների տեղեկությունների ու ուսումնասիրությունների հետ. ինչպիսիք են շիա չորրորդ իմամ Ալի իբն Յուսեյնի (658/9-713/4 թթ.) իրավագիտական աշխատությունը²⁰, Աբու Յուսուֆի (մ. 798 թ.) «Յարկամադանում» *գիմմիների* իրավունքներին ու

¹² Մատենադարան, արաբատառ ձեռ. ֆոնդ, ձեռ. 272, 357, 358; عهدنامه محمد پیغمبر، 1327، اصفهان، Մատենադարան, Ձեռագրատանից ստացված նյութեր, թղթ. 80գ, վավ. 38; Իրանի պատմական տի գրադարան, ձեռ. 8855, էջ 3բ-6ա; Յ. Փախազյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտականները, պրակ Ա, Երևան, 1956, վավ. 21; Histoire Nestorienne (Chronique de Seert), Patrologia Orientalis, vol. 13, Paris, 1918, pp. 610-617. Տարբեր երկրների ու քաղաքների բնակչության հետ կնքված վաղ իսլամական շրջանի հրովարտական-պայմանագրերի օրինակներ են հավաքվել ու տպագրվել Սեիդ Մոհամմադ Յուսեյնիի ժողովածուի մեջ՝ نامه ها و پیمانهای سیاسی حضرت محمد و اسناد، صدر اسلام، تحقیق و گردآوری دکتر سید محمد حسینی، تهران 1377.

¹³ Մատենադարան, ձեռ. 2622, 2826, 2968:

¹⁴ Ղևոնդ, Պատմություն, Երևան, 1982, էջ 35: Սամուել Անեցի, Յաւաքմունքի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայ սժայրաքաղարարեալ, Երևան, "Լաիրի", 2011, էջ 100,

¹⁵ Տե՛ս հայ պատմիչների հաղորդումների հիման վրա այդ խնդրին անդրադարձը Բ. Եպս. Կիւլեսերեան, Իսլամը հայ մատենագրութեան մէջ Վիեննա, 1930:

¹⁶ Տ. Սաւայանեանց, Պատմութիւն Երուսաղէմի, Կ. Ա., Երուսաղէմ, 1931:

¹⁷ Յ. Ս. Անսատեան, Թուրքական ֆուլթուվաթը եւ հայերը, Մանր երկեր, Լոս Անջելէս, 1988, էջ 581-620; Յ. Ս. Անսատեան, Մահմեդականութիւնը եւ բրիտանեայ հարկատուները, Ա. Մահմեդի Դաշնագիրը, Բ. Ալիի հրովարտակը, Մանր երկեր, Լոս Անջելէս, 1988, էջ 627-632:

¹⁸ Seta B. Dadoyan, The Armenians in the Medieval Islamic World. Paradigms of Interaction seventh to Fourteenth Centuries, v. I, Transaction Publishers New Brunswick (U.S.A.) and London (U.K.), 2011.

¹⁹ Գ. Մկրտումյան, Յրովարտակ – պայմանագրերը որպէս հայ-արաբական հարաբերությունների աղբյուր, Երևան, 2017:

²⁰ Յիսուս իրավունք ըստ Ալի իբն Յուսեյնի, Երևան, 2014:

Նրանց կողմից վճարվող *ջիզյային* վերաբերող տվյալները, որոնք Ա. Տեր-Ղևոնդյանի հայերեն թարգմանությամբ մատչելի են հետազոտողներին լայն շրջանակներին²¹, Բահաալ-դին Մոհամադ իբն Յուսեյն ալ-Ամելիի (1546/7-1620/21 թթ.) շիա դավանանքի իրավագիտությանը և օրենքներին վերաբերող «Տամե'ե Աբբասի» (Աբբասի ժողովածո) աշխատությանը²²: Մահմեդական տարբեր ուղղությունների ու իրավագիտական դպրոցների տեսակետները գիմմիների ժառանգության կարգի վերաբերյալ հանգամանալից վերլուծության են ենթարկվել Աս'ադ Շեյխ-օլ-Էսլամիի «Չիմմիների կտակի ու ժառանգության օրենքները մահմեդական ֆակիհների տեսանկյունից» հետազոտության մեջ, որը ևս ներգրավել ենք ատենախոսության մեջ²³:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի տվյալները իրանահպատակ հայ գիմմիների ու Յայոց եկեղեցու իրավաբանական ու սոցիալ-տնտեսական բնույթի հարցերը քննելիս հաշվի են առնվել իրանական պետականության պատմության ընթացքը և նրա տարբեր փուլերին բնորոշ պատմական իրողությունները: Այս հարցում կարևոր նշանակություն ունեն հայ և օտար հետազոտողների աշխատությունները, որոնցից Սեֆյան պետության պատմության համար հիշատակության են արժանի Մարիամ Միր Ահմադիի «Կրոնն ու պետությունն Սեֆյան դարաշրջանում»²⁴ Ռոջեր Սեյվորիի «Իրանը Սեֆյան ժամանակաշրջանում»²⁵ աշխատությունները, նաև Բեմբրիջի Յամալսարանի Իրանի պատմության Սեֆյան շրջանին վերաբերող իրատարականությունները²⁶: Իրանին հպատակ հայկական շրջանների տնտեսական պատմության համար կարևոր նշանակություն ունեն Յ. Փախադյանի, Յ. Թորոսյանի, Ի. Պետրուշևսկու, Մ. Արուստևի, Կ. Աշրաֆյանի և Վ. Ֆլորի հետազոտությունները²⁷, որոնք ընդգրկվել են սույն

²¹ Արաբական աղբյուրներ, Գ, Արաբ Մատենագիրներ Թ – Ժ դարեր, Ներածությունը և բնագրերից թարգմանությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005, էջ 100-115:

²² بها الدين محمد بن حسين عاملی، جامع عباسی، سنه 1331،

²³ اسعد شيخ الإسلامی، احكام وصیت و ارث نمی از نظر فقهای اسلامی، دانشکده الهیات نشریه گروه تحقیقاتی،

²⁴ میراحمدی مریم، دین و دولت در عصر صفوی، تهران، نشریت امیر کبیر، 1369

²⁵ سیوری راجر، ایران عصر صفوی، ترجمه کامبیز عزیزی، تهران، نشر مرکز، 1372.

²⁶ The تاریخ ایران: دوره صفویان، پژوهش از دانشگاه کمبریج، ترجمه یعقوب آژند، چاپ شفق، 1380

²⁷ Cambridge History of Iran, vol. 6 (The Timurid and Safavid Periods), edited by P. Jackson, Cambridge-London-New York-New Rochelle-Melbourne Sydney, Cambridge University Press, pp. 306-7, 311.

²⁷ А. Папазян, նշվ. աշխ.; Յ. Թորոսյան, Էջմիածնի վանական տնտեսությունը XV- XVIII դարերում, Երևան, 2007; И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI- начале XIXвв., Ленинград, 1949; Арунова М. Р. И Ашрафян, К. З., Государство Надир шаха

ատենախոսության համապատասխան բաժիններում արժարժվող խնդիրների քննության ժամանակ:

Աղվանից կաթողիկոսությանը վերաբերող խնդիրներին ուսումնասիրման ժամանակ ընդգրկել ենք այդ հարցերին անդրադարձող Լ. Մկրտումյանի աշխատությունը²⁸: Հայոց վանքերի պատմության հարցերի քննության համար օգտվել ենք Հ. Ռսկյանի հետազոտությունից, որոնցում անալիզվել ամբողջական են ներկայացված ու ուսումնասիրված են Դարաշամբի Ս. Ստեփաննոս Նախավկայի ու Մակվի Ս. Թադեի վանքերի պատմությանը վերաբերող աղբյուրագիտական նյութը²⁹:

Կաթոլիկական քարոզչության դեմ Հայ Եկեղեցու պայքարն արտացոլող շահական հրովարտակաների ուսումնասիրության ժամանակ օգտագործել ենք Կարմելյան տարեգրության մեջ ընդգրկված հարուստ պատմագրական նյութը³⁰, համեմատելով այն ժամանակաշրջանի այլ-հայ և օտար աղբյուրների հաղորդումների հետ և հաշվի առնելով այս բնագավառում Հ. Հակոբյանի, Վ. Բայբուրդյանի, Մ. Կարապետյանի, Լ. Խաչիկյանի, Մ. Փանախյանի և Լ. Սեմյոնովայի հետազոտությունները³¹: Իրանի շահերի դիրքորոշումը կաթոլիկական քարոզչության նկատմամբ բացահայտելու նպատակով Մատենադարանի այդ խնդիրն վերաբերող հրովարտակաների տվյալները համեմատվել են կաթոլիկական առաքելության նկատմամբ ի նպաստ ու նրանց

Афшара, Москва, изд. Восточной Литературы, 1958, W. Floor, The Chaparkhāna System in Qajar Iran, Iran, vol. 39 (2001), British Institute of Persian Studies,

فلور و، تاريخچه مالی - مالیاتی ایران صفویه تا پایان قاجاریه، ترجمه مرتضی کاظمی، تهران، نشر تاریخ ایران، 1394،

²⁸ Լ. Մկրտումյան, Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությանը XVII-XIX դարերում, Երևան, Տնտեսագետ, 2006:

²⁹ Հ. Համազասպ Ռսկյան, Վասարկարական-Վանի վանքերը, Բ. Մաս, Վիեննա, 1942:

³⁰ A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII-XVIII centuries, v. I, II London, 1939; Թ. Մարտյան, «Կարմելյանների տարեգրությունը» որպես Իրանի 17-18-րդ դարերի պատմագիտական աղբյուր, Երևան, 2011:

³¹ Տ. Հ. Հակոբյան, Հայերի պայքարը կաթոլիկական միսիաների ասիմիլյատորական ձգտումների դեմ Իրանում (XVII-XVIII դարերում), Արևելագիտական ժողովածու, Երևան, 1960, էջ 267; Վ. Ա. Բայբուրդյան, Արևելյան Հայաստանում միսիոներների գործունեության պատմությունից, ՊԲՀ, 1989, № 2, էջ 147-157; Մ. Կարապետյան, Հայ կաթողիկե թեմը եւ Էթնոդասական գործընթացները Նախջևանում XVII-XVIII դարերում; Հովհաննես Զմենցի, Յաղագս քերականին, աշխ. Լ. Ս. Խաչիկյանի, Երևան, 1977; М. Г. Панахиян, О режиме капитуляций в Иране (1568-1715), Автореферат диссертации, Москва, 1962; Л. А. Семенова, Орден кармелитов как орудие проникновения европейцев в Иран, Ближний и средний Восток. Сборник статей, Москва, 1962; В. А. Байбуртян, Армянская колония Новой Джульфы в XVII веке, Ереван, 1969.

գործու նեղությունն հրանում աստիճանով և նպատակով հրապարակված հրովարտակաների նյութի հետ³²:

Իրանի XVII դարի սոցիալ-տնտեսական պատմության արժեքավոր սկզբնաղբյուրներից է հայ կաթոլիկ հեղինակներից Պետրոս Պետիկի լատիներեն աշխատությունը, որի լատիներեն բնագրի անգլերեն թարգմանությունը հրատարակվել է Վ. Ֆլորի ու Կ. Օսեի աշխատասիրությամբ³³:

Սեֆյան ժամանակաշրջանի վարչա-տնտեսական կառուցվածքի, հարկային և այլ եզրույթների ուսումնասիրության ու մեկնաբանության համար մեծ կարևորություն ունեն հրանում ասիական տիրապետության շրջանում գրված երեք աշխատություններ, որոնք նվիրված են Սեֆյան պետության վարչա-քաղաքական կառուցվածքին, պատճառներին, նրանց գործունեության շրջանակներին, վարձատրության ձևերին ու տիտղոսներին: Այդ աշխատություններն են «Թեզքիրաթ ալ-մոլուք» (Թագավորների հիշատակարանը), «Դասթուր ալ-մոլուք» (Թագավորների կարգը) և «Էլ դաբ վա մավախիբ-ե դովրե-ե սալաթի-ե սեֆլիե» (Սեֆյան թագավորների ժամանակաշրջանի տիտղոսներն ու ռոճիկները): «Թեզքիրաթ ալ-մոլուք» աշխատությունը արևելագետների ուշադրության էր արժանացել դեռևս XX դարի առաջին կեսին և 1943 թ. նրա, այն ժամանակ հայտնի միակ Բրիտանական թանգարանում պահվող ձեռագիր օրինակը (B.M. 9496) ֆաքսիմիլե տարբերակով, անգլերեն թարգմանությամբ ու ծանոթագրություններով հրատարակվել էր Վ. Մինորսկու աշխատասիրությամբ³⁴: Այդ աշխատության բնագիրը 1954 թ. Դաբի ըստի ղրի կողմից հրատարակվում է Թեհրանում³⁵: Յետագայում 1969 թ. Մուհամմադ Թաղի Դանեշ փաթուհի կողմից հայտնաբերված այդ աշխատության մեկ այլ ձեռագրի հիման վրա ճշտվում է նրա հեղինակի անունը՝ Միրզա Սամի'ա: Իրանցի հետազոտողն այդ մասին նշում է նույն թեմատիկայով գրված մեկ այլ աշխատության՝ Մուհամմադ Ռաֆի' Անսարիի «Դասթուր ալ-մոլուքի» առաջաբանում³⁶: «Թեզքիրաթ ալ-մոլուքի» հեղինակն իր աշխատությունը գրելիս հենվել է ավելի վաղ գրված «Դասթուր ալ-մոլուքի»

32 شاه عباس: مجموعه اسناد و مکاتبات تاریخی همراه با یادداشت‌های تفصیلی، جلد سوم، به اهتمام دکتر عبد الحسن نوابی، تهران، انتشارات بنیاد فرهنگ ایران، 2537، ص. 286-7. یکصد و پنجاه سند تاریخی از جلایریان تا پهلوی، بکوشش سر هنگ جهانگیر قایم مقامی، ص. 24

33 A Man of Two Worlds Pedros Bedik in Iran 1670-1675, translated from the Latin and annotated by Collette Ouahes and Willem Floor, Washington, Mage publishers, 2014.

34 Tadhkirat al-mulūk, A manual of Safavid administration (circa 1137/1725), Persian text in Facsimile, translated and explained by V. Minorsky, London, 1943.

35 تذکره الملوك، بکوشش محمد دبیرسیاقی، تهران، کتابفروشی زوار، 1332.

36 دستور الملوك ميرزا رفيعا، به کوشش وتصحيح محمد اسماعيل مارچينکوسکي، ترجمه علی کردابادی، تهران، 1385.

վրա, որի հեղինակը եղել է Սեֆյան պետության բարձրաստիճանի պաշտոնյա՝ *մուսթոփի ալ-մամալիք*: Այս աշխատությունը որպես Սեֆյան պետության վարչաքաղաքական կառուցվածքի սկզբնաղբյուրը խմբագրվել ու հրատարակվել է Իրաք ԱՖՀ արի կողմից 2001 թ., ապա անգլերեն թարգմանությամբ և մանրամասն մեկնաբանություններով վերահրատարակվել Մուհամմադ Իսմայիլ Մարչինկովսկու կողմից³⁷:

Երրորդ աշխատությունը գրվել է 1720-ական թվականների վերջին՝ *մալեսնևիս* Միրզա Ալի Նադի Նասիրի կողմից, որը սերում էր Օրդուբադում ապրող տոհմական *մոնշի ալ-մամալիքների* ընտանիքից³⁸: Այս սկզբնաղբյուրը, որ տպագրվել է Թավրիզում Զաքի Զուսեյն Աղա Նախլևանիի հավաքածուի մեջ գտնված միակ ձեռագրի հիման վրա հարուստ տեղեկություններ է բովանդակում Սեֆյան վարչակարգի պաշտոնյաների, այդ պաշտոնները զբաղեցրած անձանց տիտղոսաբերի, գործառույթների, նրանց ենթակաների, ճոճիկի, եկամտի աղբյուրների ու աշխատավայրի մասին: Սկզբնաղբյուրում ամատ տեղեկություններ կան ինչպես կենտրոնական ապարատի պաշտոնյաների, այնպես էլ երկրի շրջանները կառավարող *վալիների*, *բեկլարբեկերի* ու *հաքիմների* մասին: Երեք աշխատություններն էլ գրվել են որպես Սեֆյան վարչական ապարատի ուղեցույց Իրանի աֆղան տիրակալների պաշտոնության պատվերով երկրի կառավարման նախորդ շրջանի փորձը նոր իշխանություններին փոխանցելու համար: Նրանք թեև որոշ հարցերում բովանդակում են միմյանց հակասող տվյալներ, այնուամենայնիվ միմյանց լրացնելով՝ տալիս են Սեֆյան վարչաքաղաքական կառուցվածքի ամպլետ ամբողջական պատկերը:

Սեֆյան շրջանի պարսկերեն գրագրության կանոնների ու որոշ եզրույթների, հատկապես վավերագրերի տեսակների ամանձնահատկությունների ուսումնասիրության ու բնորոշման համար արժեքավոր սկզբնաղբյուր է «Մոնշա՛թ-ե Սոլեյ մանի» (Սուլեյ մանի նամակագրությունը) աշխատությունը՝ գրված շահ Սուլեյ մանի գրագրատան անհայտ գրագրի կողմից³⁹: Պարսկերեն վավերագրագիտության սկզբունքային հարցերի ուսումնասիրությանը նվիրված արժեքավոր աշխատություններից են Ջահանգիր Ղայեմմաղամիի և Սամ Ալիի հետազոտությունները, որոնցում աղբյուրագիտական լայն հենքի վրա

³⁷ M. Ismail Marcinkowski, Dastur al-Moluk, Encyclopædia Iranica, originally published 2005, տես կայքէջ. <http://www.iranicaonline.org/articles/dastur-al-moluk> .

³⁸ نصیری میرزا علی نقی، القاب و مواجب دوره دور سلطین صفوی، به تصحیح یوسف رحیم لو، مشهد، 1371، ص. 17

³⁹ منشآت سلیمانی تألیف دبیران دبیرخانه شاه سلیمان صفوی، به کوشش رسول جعفریان، تهران، 1388.

ներկայացվում են Սեֆյան, Աֆշարական ու Ղաջարական ժամանակաշրջանի վավերագրերի տեսակները, նրանց գրություն ու կառուցվածքի առանձնահատկությունները⁴⁰:

Ատենախոսության կառուցվածքը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից ու հավելվածից: **Ներածություն** մեջ ներկայացվում է թեմայի արդիականությունը, ատենախոսության նպատակն ու խնդիրները, ժամանակագրական սահմանները, հիմնախնդրի ու սուբնսախրվածության աստիճանը, փորձաքննությունը, հետազոտության մեթոդիկան, գիտական նորոշյալն ու գործնական նշանակությունը, օգտագործված աղբյուր ու տպագիր աղբյուրները և ուսումնասիրությունները:

ԳԼՈՒԽԱՌԱՋԻՆ: Մատենադարանի XVII դարի II կես - XIX դարի I կեսի պարսկերեն վավերագրերը որպես հայ-իրանական առևտրային ու ներքին արձանագրող փաստաթղթեր

1.1 Ղարսկերեն վավերագրերի օգտագործումը հայ ազիտական հետազոտության ներքինում և Մատենադարանի պարսկերեն վավերագրերի հավաքածուն: Այս բաժնում ամփոփում ենք պարսկերեն վավերագրերի ներգրավվածությունը հայ ազիտական հետազոտության ներքինում մեջ սկսած XVIII դարից մինչև մեր օրերը, քննվում է դրանց հետ աշխատելու մեթոդիկական տարբեր հայ ազետներին աշխատելու ներքինում ու աղբյուրները: Հակիրճ ներկայացվում են Մոսկվայի ու Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի արխիվային հավաքածուների որոշ նյութերի ուսումնասիրությունը նվիրված աշխատանքները: Առավել հիմնավոր կերպով ներկայացվում են Մատենադարանի արխիվային հավաքածուները, նրանցում պահվող վավերագրերի տեսակները և դրանց ուսումնասիրման ուղղությունը ամբողջ աշխարհում կատարված աշխատանքը:

1.2 Նոր Ջուղայի դերը Հայոց եկեղեցու և իրանական իշխանության ներքինում միջև փոխարարություններում: Մատենադարանի քննվող պարսկերեն վավերագրերում արտացոլվել է Նոր Ջուղայի մեծահարուստ խոջաների դերն ու նշանակությունը իրանահայտակարար հայության համար խիստ կարևոր խնդիրների լուծման հարցում, ինչպես նաև նրանց աջակցությունը Հայոց կաթողիկոսների գործունեությանը:

Սամ Ելի, Բրրսի Բրման Ուրսի Դորն Օլ Քաջար, Թրան, Աննարատ Կլկ Զրին, 1392, 40, Գլիմ Քալմի Ե, Քրմե ի Բր Տնախտ Ասնադ Թարիխի, Թրան, Տրսլնս Աննարատ Անյմն Աթար Քլի, 1350.

Իրենց արտոնյալ դիրքի շնորհիվ հայ ազդեցիկ վաճառականները կարողանում են միջամտել իրանահպատակ հայ ությանը վերաբերող հարցերին և ազդել շահի կայացրած որոշումների վրա: Ատենախոսության այս բաժնում հիշյալ վավերագրերի ու գուճահեռ այլ աղբյուրների համարոնթյամբ դիտարկվում ու լուսաբանվում է նրանց մասնակցությունը հայ ժողովրդի համար կենսական կարևորություն ներկայացնող հարցերի բարձրացմանը և դերը որոշ անցանկալի երևույթների կանխման և այլևայլ հարցերի կարգավորման գործում: Հետագոտվում է նաև Նոր Ջուղայի դերը Ամենայն Յայոց կաթողիկոսների ընտրության ու նրանց գործունեության արդյունավետության հարցերում:

1.3 Էջմիածնի կաթողիկոսների ջանքերը XVIII-XIX դարերում պարսկերեն փաստաթղթերով Յայոց եկեղեցու իրավունքները պաշտպանել ու գործում: Այս բաժնում քննվում են նշված շրջանում պարսկերեն վավերագրերի ստեղծման պատմության հարցերը, որոնցում արտացոլվել է Ամենայն Յայոց կաթողիկոսների դերն ու նրանցից մի քանիսի գործարած առավելագույն ջանքերը այդ փաստաթղթերի ձեռք բերման գործում: Այս բաժնում քննվող հարցերի մասին տվյալները առավելապես առկա են հիշյալ շրջանի պարսկերեն վավերագրերում (հրովարտակներ և կալվածագրեր), ուստի դրանք առավել լիարժեք ներկայացնելու նպատակով ներգրավվել են կաթողիկոսների կողմից ձեռք բերված կալվածքներին, նրանց շուրջ տեղի ունեցած վեճերին ու խնդիրներին առնչվող գրեթե բոլոր պատմական փաստաթղթերը: Վավերագրերի տվյալները համարվել ու լրացվել են այլ պատմական աղբյուրներում առկա տեղեկությունների հետ՝ հարցը առավել ամբողջական ներկայացնելու նպատակով:

1.4 «Աղվանից կաթողիկոսությանը, Տաթևի, Ս. Թադեի և Ս. Ստեփանոս Նախակայի վանքերին վերաբերող պարսկերեն փաստաթղթերի ձեռքբերման հանգամանքները» բաժնում հետագոտվում են Մատենադարանի պարսկերեն վավերագրերի հավաքածուի մեջ ընդգրկված նշված վանքերին վերաբերող փաստաթղթերի ստեղծման պատմության հարցերը, որոնք անմիջական կապ ունեն այդ վանքերի պատմության հետ և ի հայտ են բերում տարբեր ժամանակահատվածներում նրանց առջև ծագած խնդիրներն ու նրանց հետ կապվող իրադարձությունները: Ուսումնասիրվող վավերագրերի տվյալները բացահայտում են հիշյալ կրոնական հաստատության ներկայի ակնառու առաջնորդների ջանքերն ու կարևոր դերը իրենց վանքերի ու վանական համալիրների տնտեսապես բարվոք ու իրավապես պաշտպանված դրություն ապահովման գործում:

1.5 «Յայ մել իքներին տրված պարսկերեն փաստաթղթերի ստեղծման հանգամանքները և նրանց պատմական արժեքը»

բաժինը նվիրված է հայ մել իքներին ու ազդեցիկ հայ պաշտոնյաներին տրված պարսկերեն փաստաթղթերի տվյալների վերլուծությանը: Այս բաժնում ուսումնասիրվում են այդ փաստաթղթերի հրապարակման պատմական հանգամանքները, արժեքավորվում նրանց տվյալները պատմա-քաղաքական զարգացումների լայն համատեքստում: Մանրամասն քննությունը լրացվում ու ճշգրտվում է Արցախի, Սյունիքի, Գեղարքունիքի ու Երևանի հայ մել իքական տների, նաև հայ ազգի այլ ազդեցիկ անձանց ու պաշտոնյաների XVII դարի II կես - XIX դարի I կեսի պատմությունը: Գեղարքունիքի Մել իք-Շահնագարյանների պատմությունը, հավաքված լինելով XIX դարի սկզբին Դավիթ Մել իք-Շահնագարյանի ժամանակակից նշանակությունը իր պատմական կալվածքների նկատմամբ վերականգնելու նպատակով հարուցված գործի համար՝ փաստագրական հարուստ նյութով լրացնում են նրա տոհմի XVI - XIX դարերի պատմությունը: Երևանի, Նախիջևանի ու Ղարաբաղի հայ մել իքներին տրված պարսկերեն հրովարտակները հստակորեն ուրվագծում են իրանական իշխանությունների վարած քաղաքականության հիմնական ուղղվածությունն ու առանձնահատկությունները XVIII դարի կեսից XIX դարի I կեսն ընկած ժամանակահատվածում:

1.6 «Մառնադարանի պարսկերեն վավերագրերը գրող և ընդօրինակող գրագիրները»

վերնագիրը կրող բաժնում փորձ է արվում ընդհանրացնելու ամենատարբեր աղբյուրների հաղորդումները քննվող պարսկերեն փաստաթղթերի գրությանը առնչված հրանի արքունի գրագիրների ու Յարավային Կովկասում գործող ընդօրինակողների մասին: Յետագոտվում է Էջմիածնի կաթողիկոսներին ենթակա օտարազգի գրագիրների մասին ամկա նյութը: Միաժամանակ մեծ ուշադրություն է դարձվում հայ ազգի գրագիրների ու ընդօրինակողների մասին բազմակողմանի տեղեկությունները ուսումնասիրմանն ու ընդհանրացմանը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ: Մառնադարանի պարսկերեն վավերագրերի XVII դարի II կես - XIX դարի I կեսի հայոց պատմությունը վերաբերող տվյալների քննությունը

2.1 Մուհամմադ մարգարեի ու Իմամ Ալիի անուհից հայերի հետ կնքված հրովարտակ-պայմանագրերը որպես իրանապարակ հայերի հիմնական իրավունքներն ու ազատությունները ասպիտվող փաստաթղթեր: Այս բաժնում կատարվում է այդ փաստաթղթերի իրանում գործող տարբերակների առանձնահատկությունները

աղբյուրագիտական վերլուծության, ներկայացվում են այդ վավերագրերում նշվող հիմնական իրավական դրույթները, որոնք ընկած են Սեֆյան շրջանում գիմմիների կարգավիճակի հիմքում: Ուսումնասիրվում է այդ փաստաթղթերի դերն ու նշանակությունը իրանահպատակ հայության հիմնական իրավունքներն ու պարտականությունները սահմանող իրավական նորմերի ու օրենքների ձևավորման, ինչպես նաև հայ-գիմմիների իրավունքների պաշտպանության հարցերում:

2.2 «Իրանահպատակ հայության իրավունքներն ու պարտավորություններն ըստ Մատենադարանի XVII դարի II կես - XIX դարի I կեսի պարսկերեն վավերագրերի» բաժնում քննվում են իրանահպատակ հայության, որպես գիմմի բնակչության, իրավաքաղաքական դրույթունը կարգավորող օրենքները՝ ձևավորված տարբեր խնդիրների շուրջ հրապարակված շահական հրովարտակներում ու ֆաթվաներում (մահմեդական հոգևորականության կայացրած վճիռներում): Մատենադարանի XVII դարի II կես - XIX դարի I կեսի պարսկերեն այս փաստաթղթերի ամառնյութը հնարավորություն է տալիս լիարժեք կերպով լուսաբանել իրանում հայ գիմմիների իրավունքներն ու պարտավորությունները: Մասնավորապես, ուսումնասիրվում են հայ գիմմիների կողմից վճարվող գլխահարկի՝ շիզայի չափը, նրա վճարման կարգին վերաբերող նրբությունները, հայերի կրոնական ազատությունները, սեփականատիրության և այլ իրավունքների մանրամասները, եկեղեցական շինարարության և հայերի ժառանգության խնդիրներում գործող օրենքները իրանական տիրապետության տարբեր ժամանակահատվածներում ու փուլերում:

2.3 «Յայոց եկեղեցու իրավաքաղաքական ու սոցիալ-տնտեսական դրույթան հարցերն ըստ դիտարկվող ժամանակաշրջանի պարսկերեն վավերագրերի»: Մատենադարանի դիտարկվող ժամանակաշրջանի պարսկերեն վավերագրերի ամառնյութը հնարավորություն է տալիս մանրամասն ուսումնասիրել Յայոց եկեղեցու իրավաքաղաքական ու սոցիալ-տնտեսական պատմության իրողությունները՝ հենվելով նրա կալվածքներից շատերի ձեռքբերման, դրանց շուրջ վեճերի ու դատավարությունների, Մայր Աթոռին տրված հարկային ու իրավական ամանձնաշորհումների և արտոնությունների կապակցությամբ հրապարակված փաստաթղթերի վրա: Այս բաժնում ուսումնասիրվում են պարսկերեն վավերագրերի տվյալները իրանական տիրապետության ներքո Յայոց եկեղեցու իրավունքների, կալվածքների, նրանց հետ կապված խնդիրների, հարկային և այլ արտոնությունների վերաբերյալ ժամանակագրական տարբեր կտրվածքներով:

Մեկնաբանվում ու լուսաբանվում են այդ իրավունքների ու արտոնույթի ու ներքին ձեռքբերման պատճառահետևանքային կապերը, նրանց պաշտպանության ուղիները և պատմության տարբեր փուլերում փաստավերագրական նյութերում դրանց վերաբերող ձևակերպումների արտաքին ու ներքին բովանդակային ամանձնատկույթի ու ներքին:

2.4 «Յայոց եկեղեցու ներքին որոշ խնդիրների արտացոլումը պարսկերեն վավերագրերում» բաժնում հետազոտվում են պարսկերեն վավերագրերում արտացոլված Յայոց եկեղեցու ներքին այնպիսի խնդիրներ, որպիսիք են Յայոց կաթողիկոսների կողմից պարսից արքունիքին որպես հարկ վճարվող փիշքաչի երևույթը և մասամբ նրա հետ կապվող կաթողիկոսական աթոռակռիվները, Էջմիածնի ու Աղվանից կաթողիկոսների միջև որոշ թեմերի շուրջ, նաև որոշ վանքերի միջև ամանձին թեմապատկան գյուղերի շուրջ ընթացող պայքարը: Պարսկերեն վավերագրերի նյութերի հիման վրա ճշգրտումներ են կատարվում Յայոց կաթողիկոսների կողմից տարբեր ժամանակաշրջաններում պարսից արքունիքին որպես հարկ վճարված փիշքաչի չափի ու հաճախականության հարցերում: Բացահայտվում է փիշքաչի անվան տակ չարաչահումների ու կաշառակերությունների անմիջական կապը կաթողիկոսական աթոռակռիվների հետ: Այս բաժնում քննվում է նաև XIX դարի սկզբին խորացած ռուս-իրանական հակամարտության արտացոլումը պարսկական վավերագրերում և նրա դերը նույն շրջանի կաթողիկոսական աթոռակռիվներում:

2.5 Կաթոլիկական քարոզչության ու ներսրահում ու նրա դեմ Յայոց եկեղեցու պայքարի արտացոլումը Մատենադարանի XVIII դարի պարսկերեն վավերագրերում: Այս բաժինը նվիրված է հայության շրջանում կաթոլիկական քարոզչության ու հայերի կաթոլիկացման ցավոտ հարցի համակողմանի ուսումնասիրությանը՝ հենվելով շահական հրովարտակաների ու գուգահեռայլ աղբյուրների տվյալների վրա: Բաժինը բովանդակում է հակիրճ ակնարկ դեռ XIII դարից հայության շրջանում սկսված կաթոլիկության տարածման մասին, որը նոր խթան էր ստացել շահ Աբբաս Ա-ի իշխանության տարիներին և գարգանում էր որչե՛ք XVII դարի ընթացքում՝ օգտվելով Յոնմի պապի ու Ֆրանսիայի կայսեր միջնորդությամբ Սեֆյան իշխանության ներքին ձեռքբերված արտոնույթի ու ներքինից: Ատենախոսության այս բաժնում առավել մանրամասն քննվում է XVIII դարի շահական հրովարտականերում արտացոլված Յայոց եկեղեցու առաջնորդներից մի քանիսի բռնած անգիջում դիրքորոշումն ու ձեռնարկած քայլերը հայերի շրջանում կաթոլիկական քարոզչության ու հայերի դավանափոխության դեմ: Թե՛ կաթոլիկ միսիոներներին և թե՛ Յայոց եկեղեցու

առաջ նորոգներին տրված շահական հրամանագրերի համակողմանի վերլուծությանը թույլ է տալիս հստակ ներկայացնել նաև իրանական իշխանության ներքին դիրքորոշումն այս հարցի շուրջ պատմական տարբեր ժամանակահատվածներում, որը հեռու էր կողմերից որևէ մեկին միանշանակ կերպով աջակցելուց:

ԳԼՈՒԽԵՐԸ: Մատենադարանի XVII դարի II կես - XIX դարի I կեսի պարսկերեն վավերագրերի լեզվա-ոճական, կառուցվածքային ու եզրաբանական առանձնահատկությունները

3.1 «Մատենադարանի XVII դարի II կես - XIX դարի I կեսի պարսկերեն վավերագրերի տեսքատարանական վերլուծությունը»

բաժնում պարսկալեզու գրագրությանը վերաբերող աղբյուրների ու Մատենադարանի պարսկերեն վավերագրերի բնագրերի գուգահեռ վերլուծության միջոցով, ինչպես նաև ի մի բերելով նմանատիպ հետազոտությունների միջազգային փորձը՝ կատարվում է հիշյալ վավերագրերի բնագրագիտական ուսումնասիրությանն և հետազոտվում է վավերագրերի տարբեր տեսակների լեզվա-ոճական, կառուցվածքային ու այլ առանձնահատկությունները տարբեր ժամանակահատվածներով: Քննվում են շահական ու խանական հրովարտակաների, շարիաթական-նոտարական վավերագրերի տեսակների ու պատճառական նամակագրության, բնօրինակների ու պատճենների գրության սկզբունքային հարցերը, նրանցում օգտագործվող լեզվա-կառուցվածքային կառուցվածքների ու դարձվածքների յուրահատկությունները:

3.2 «Չայոց կաթողիկոսների պատվանուններն ու սիտղոսաշարը Մատենադարանի XVII դարի II կես - XIX դարի I կեսի պարսկերեն վավերագրերում» բաժնում մանրամասն ներկայացվում են հայոց կաթողիկոսների պատվանուններն ու սիտղոսաշարերը ընդգրկված ժամանակաշրջանի տարբեր շրջափուլերում և պարզաբանվում դրանց առանձնահատկությունները՝ կախված գրագրության կարգամաս օրինաչափություններից ու յուրահատկություններից:

3.3 «Չայոց վանքերի անվանումների ու տեղանունների պարսկերեն վավերագրերում օգտագործվող տարբերակները» բաժնում հատուկ ուսումնասիրության են ենթարկվում պարսկերեն վավերագրերում հանդիպող հայոց վանքերի անվանումները, հայկական տեղանուններն ու նրանց օտար տարբերակները: Ներկայացվում են այդ տարբերակների հիմնական մասի ծագման ակունքները և պատմությունը՝ համադրելով դրանք հայկական ու պարսկական պատմագրության մեջ օգտագործվող տեղանունների հետ:

Դիտարկվում է օտար աղբյուրներում շրջանառվող տարբերակների կապը այլ ազգի հարևանների և եզվի հնչյունակալանու տառային համակարգերի առանձնահատկությունների, նրանց ընկալումների ու իշխանական օղակների դերը օտար անվանումների ծագման ու պարսկալեզու գրականության մեջ դրանց ամրագրման գործում:

ԵՐԱԿԱՏՈՒԹՅՈՒՆ

բաժնում ամփոփվում են ատենախոսության մեջ կատարված աշխատանքի արդյունքները, ըստ որոնց արվել են հետևյալ եզրահանգումները՝

- Մատենադարանի XVII դարի II կես - XIX դարի I կեսի պարսկերեն վավերագրերը որպես հայոց պատմության սկզբնաղբյուրներ, մշտապես գտնվել են հայագետների ու շարժումների կենտրոնում և օգտագործվել հայոց պատմության տարբեր հարցերի քննության ժամանակ: Պարսկերեն վավերագրերի տվյալների գիտական շրջանառությանը մեծապես նպաստել են որոշ հայագետների ուսումնասիրությունները և հատկապես նրանց բնագրերի ու թարգմանված տարբերակների գիտական հրատարակումը «Մատենադարանի պարսկերեն վավերագրերի» հիսկ պրակներում: Այնուամենայնիվ, այդ առաջին աղբյուրները սկզբնական նյութի միայն մի փոքր մասն էլ իրաժեշտ կերպով օգտագործվել հայագիտության մեջ:

- Քննվող վավերագրերի հաղորդումները մատնանշում են Յայոց եկեղեցու վաստակաշատ առաջնորդների դերը իրանական տիրապետության ներքո հայության իրավունքների պաշտպանության, հայ-իրանական փոխարարբերությունների կառուցման գործում, որը հատկապես XVII-XVIII դարերում մեծապես հենվում էր Նոր Ջուղայի հայ համայնքի ու նրա ազդեցիկ վաճառականների գործունեության վրա: Պարսկերեն վավերագրերի տվյալներից ակնհայտ է, որ Նոր Ջուղայի դերը XVII-XVIII դարերում այնքան վճռորոշ էր, որ թույլ էր տալիս նրան միջամտել Յայոց կաթողիկոսների ընտրության հարցին, առաջ քաշել իրեն ցանկալի թեկնածուներին, ուղղորդել կաթողիկոսներին և վերահսկել նրանց գործունեությունը:

- Մատենադարանի պարսկերեն փաստաթղթերի մի մասը ստեղծվել ու ձեռք է բերվել հայոց վանքերի ու խոշոր վանական համալիրների առաջնորդների ջանքերով՝ արտացոլելով նրանց պատմության շրջափոխներն ու կարևոր իրադարձությունները, ելնելով նրանց ու նրանց հաստակ հայկական բնակավայրերի շահերից, ուստի նրանք հայ ժողովրդի ու Յայոց եկեղեցու պատմության անբաժան մասնիկ են և արժեքավոր սկզբնաղբյուրներ:

- Յայ մեկ իքներին ու խոջաներին վերաբերող պարսկերեն վավերագրերի տվյալների հակիրճ ակնարկն ու

ուսու մնասիրությունը մատնանշում են նրանց սերտ կապը ժամանակաշրջանի պատմական ընթացքի ու դեպքերի գարգացման հետ, արդյունքում նաև նրանց արժեքը հայ մելիքական տների պատմության ու նրանց առնչվող հարցերի քննության համար: Այդ տվյալները ճշգրտում ու լրացնում են ժամանակաշրջանի քաղաքական պատմության իրողություններն ու որոշ իրադարձությունների ընթացքը՝ կապվելով հիշյալ անձանց քաղաքական գործունեության մանրամասների հետ:

- Մատենադարանի պարսկերեն վավերագրերի ու ժամանակաշրջանի մյուս աղբյուրների տվյալները թույլ են տալիս բացահայտել Հայոց եկեղեցու առաջնորդների և Իրանի կենտրոնական իշխանություններին ու Երևանի խանի միջև գրագրությունները վարող և պարսկերեն փաստաթղթերը կազմող գրագիրներից շատերի անունները, որոնց մի մասը իրանական կառավարության բարձրաստիճան գրագիրներն էին, մի քանիսն էլ՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին ու Երևանի խանին ենթակա, հետագայում նաև ռուսական զանազան ստյաններում աշխատող գրագիրները: Այս վերջին տեսակի գրագիրների մեջ կային նաև հայագրի ծագում ունեցողները, որոնք այնքան էին հմտացել այս բնագավառում, որ ընդօրինակում էին ձեռագրեր ու անգամ հեղինակում ինքնուրույն պատմագրական երկեր:

- Մահմեդական տիրապետության տակ գտնվող թե՛ հայ Առաքելական և թե՛ քրիստոնեական մյուս դավանանքների առաջնորդների ձեռքում եղած տարալեզու պայմանագրերի (որոնց ուշ միջնադարի ընդօրինակությունների օրինակներ կան նաև Մատենադարանի պարսկերեն արխիվային հավաքածուի մեջ) աղբյուրագիտական վերլուծությունը և ճանկերաբանների ընդհանրություններ, որոնք խոսում են երկու տարբեր արաբերեն սկզբնաղբյուրներից ծագած լինելու մասին: Այդ պայմանագրերը ստեղծվել են IX-XIX դարերում պատմական հենքի վրա՝ որոշակի չափով պահպանելով իրենց սկզբնաղբյուրներում առկա պատմական իրողությունների հետքը և հարմարեցվելով ժամանակի ու միջավայրի պահանջներին: Մուհամմադ բարգարեի ու Իմամ Ալիի անուններից հայերի ու մյուս քրիստոնյաների հետ կնքված հրովարտակ-պայմանագրերը դարեր շարունակ եղել են այն հենարանը, որի վրա խարսխվել է նրանց կացությանը մահմեդականների գերիշխանության պայմաններում: Հիշյալ փաստաթղթերն էլ ավելի կարևորվել են մահմեդականների կրոնական մոլեռանդության պոթյակում և անհանդուրժողականության աճի շրջաններում: Հարմարեցվելով ժամանակի ու միջավայրի պահանջներին՝ հիշյալ փաստաթղթերը Հայոց եկեղեցու հոգևոր

առաջնորդների կողմից օգտագործվել են համայնքի դրույթությունը բարելավվելու և մահմեդականների հետ հարաբերություններում ծագած խնդիրները կարգավորելու նպատակով:

- Մուհամմադ մարգարեի անունից կնքված պայմանագրերում հայ գիմմիներին վերաբերող իրավական ձևակերպումները, նաև ընդհանրապես իրանական պետությանը հաստակ մահմեդական բնակչությանը ևս վերաբերող որոշ այլ օրենքներ արտացոլվել են Մատենադարանի XVII- XIX դարերի պարսկերեն վավերագրերում: Պարսկերեն վավերագրերի տվյալները որոշ կոնկրետացում են մտցնում այդ հարցերի մանրամասներում և հնարավորություն են տալիս հանգամանալից քննել և լուսաբանել իրանական տիրապետության տակ ապրող հայության կրոնա-քաղաքական իրավունքներն ու պարտավորությունները, իրավունքների պաշտպանության ուղիները և միջոցները: Քննվող վավերագրերի տվյալներն օգնում են նոր դիտարկումներով ամբողջացնել գիմմիների ժամանակակից իրավունքի վերաբերող շիա իսլամի իմամ Ջաֆարին վերագրվող օրենքի մասին մինչ այժմ հայտնի տվյալները՝ որոշելով նրա շրջանառության դրվելու ժամանակը, պատճառները, հայության համար կործանարար հետևանքները, նրան հակազդելու միջոցները և նրա դեմ Յայոց եկեղեցու առաջնորդների ձեռնարկած քայլերը:

- Մատենադարանի XVII դարի II կես - XIX դարի I կեսի պարսկերեն փաստաթղթերով ձեռք են բերվել կալվածքներ, հարկային և այլ արտոնություններ, պաշտպանվել դրանք զանազան ոտնձգություններից: Եվ փաստորեն, այդ կերպ ամրագրվել են Էջմիածնի տնտեսական կայունությունը և իրավա-քաղաքական պաշտպանվածությունը իրանական պետության գերիշխանության պայմաններում: Այս պատճառով դիտարկված վավերագրերն այն սկզբնաղբյուրներն են, որոնք առավել լիարժեք ու մանրամասն տվյալներ են բովանդակում Յայոց եկեղեցու իրավա-քաղաքական ու սոցիալ-տնտեսական դրույթան այդ շրջանի հարցերի շուրջ:

- Անժխտելի է Մատենադարանի պարսկերեն վավերագրերի արժեքն ու կարևորությունը իրանական իշխանությունների հետ Յայոց եկեղեցու հոգևոր առաջնորդների փոխհարաբերությունների ենթադրույթի և կաթողիկոսական աթոռակռիվների մանրամասների ուսումնասիրության տեսանկյունից: Այս աղբյուրների տվյալներով ճշգրտվում են Յայոց կաթողիկոսների կողմից տարբեր ժամանակահատվածներում իրենց իրավունքների հաստատման համար վճարվող փիշքաչի չափը և նրա, որպես հարկ, ամրագրված լինելը Սեֆյան, Աֆշարական ու Ղաջարական թագավորական տների գերիշխանության շրջաններում:

Վավերագրերի տվյալները նաև հստակություն են մտցնում կաթողիկոսական աթոռակառուցվածքում օտար միջամտության դերի, բնույթի ու դրդապատճառների հարցերում:

- Ատենախոսության մեջ դիտարկվող պարսկերեն վավերագրերը մանրամասն տվյալներով հարստացնում են Էջմիածնի ու Աղվանից կաթողիկոսությունների, նաև Արևելյան Հայաստանի որոշ վանքերի միջև որոշ թեմերի ու բնակավայրերի թեմական պատկանելության շուրջ տեղի ունեցած վեճերի պատմությունը և օգնում հստակացնել այդ հարցերին վերաբերող առանձին իրողություններ:

- Դիտարկվող շրջանի պարսկերեն հրովարտակները հայ ժողովրդի պատմության ցավալի խնդիրներից մեկի՝ կաթողիկոսական քարոզչության ու նրա դեմ Հայ Եկեղեցու առավել հեռաւտեսն երկայացուցիչների մղած համառ պայքարի ու ձեռնարկած համարձակ քայլերի արժեքավոր սկզբնաղբյուրներն են: Այդ տվյալների համարումը ժամանակաշրջանի մյուս աղբյուրների հետ հնարավորություն է տալիս լուսաբանել իրանահպատակ հայության շրջանում կաթողիկոսական քարոզչության ընթացքը XVII-XVIII դարերում:

- Մատենադարանի պարսկերեն վավերագրերի առատ նյութը հնարավոր է դարձնում նրանց որպես պարսկալեզու գրագրության տարբեր տեսակների նմուշների լեզվաբանական, կաղապարային ու կառուցվածքային առանձնահատկությունների գատորոշումն ու ուսումնասիրությունը պատմական զարգացման մեջ, որը մեկանգամ ևս ապացուցում է այդ փաստաթղթերի կարևորությունը պարսկական վավերագրագիտության համար:

- Մատենադարանի պարսկերեն վավերագրերի տվյալները օգնում են հիմնավոր կերպով լուսաբանել Արևելյան Հայաստանի հայկական բնակավայրերի բազմաբնույթ օտարանվանումների ծագման հանգամանքները, որոնք կապված չէին բնակավայրի էթնիկ կազմում տեղի ունեցած որևէ փոփոխության հետ: Այդ տեղանունները հիմնականում արտացոլում են բնակավայրերի սոցիալ-տնտեսական ու քաղաքական որոշ իրողությունները և օտար հարևանների պատկերացումներն ու վերաբերմունքը նրանց նկատմամբ՝ այդպիսով կարևոր նշանակություն ունենալով այդ բնակավայրերի պատմության համար:

ՀՍԿԵԼՎԱԾՆ իրենից ներկայացնում է ուսումնասիրված պարսկերեն վավերագրերում հանդիպող ինչպես նաև ատենախոսության մեջ օգտագործված հարկային, սոցիալական, վարչական և այլ եզրույթների բառարան: Եզրույթները փորձել ենք մեկնաբանել հնարավորինս լիարժեք կերպով՝ հենվելով աղբյուրների ու

մասնագիտական գրականության մեջ արդեն գործածվող ձևակերպումների վրա:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

ա) Մենագրություններ

1. Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, արակ III, Երևան, “Չանգակ 97”, 2005, 728 էջ:

2. Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, արակ IV, Երևան, “Նաիրի”, 2008, 386 էջ:

բ) Հոդվածներ

1. Սյունիքի Օրբելյանները XVIII-XIX դարերում, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XIX, Երևան, “Չանգակ 97”, 2000, էջ 70-78:

2. Քաջաթաղի 17-րդ դարի պատմությանը վերաբերող մի փաստաթուղթ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XX, Երևան, “Չանգակ 97”, 2001, էջ 168-175:

3. Կաթուղիկ քարոզչությունը հրանում և հայ իրականությունը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXI, Երևան, “Չանգակ 97”, 2002, էջ 200-218:

4. Տաթևի վանքի XVII դարի երկրորդ կեսի պատմությունն ըստ պարսկական հրովարտակների տվյալների, XXII, Երևան, “Չանգակ 97”, 2003, էջ 186-200:

5. Թահմասայ II-ի հայերին ուղղված հրովարտակները և 1730-31թթ. նրա արշավանքը դեպի Երևան, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXIII, Երևան, “Չանգակ 97”, 2004, էջ 356-571:

6. Գեղարքունիքի Մելիք-Շահնագարյանների պատմությունն և, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXIV, Երևան, “Չանգակ 97”, 2005, էջ 303-329:

7. Պարսկալեզու վավերագրերը Մակվի Ս. Թադեի վանքի մասին, XXV, Երևան, “Չանգակ 97”, 2006, էջ 351-370:

8. Ղարաթաղի հայ մելիքները Նաիրի շահի իշխանության տարիներին, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXVI, Երևան, “Ասողիկ”, 2007, էջ 257-278:

9. Հայոց եկեղեցու շահերի և հայ ապահպանության համար Ղազար Ջահկեցի կաթողիկոսի ձեռք բերած շահական հրովարտակների մասին, Բանբեր Մատենադարանի, 18, Երևան, 2008, էջ 115-123:

10. Documents in Persian on the St. Thaddeus Monastery of Maku, Aramazd (Armenian Journal of Near Eastern Studies), volume IV, issue 2, 2009, pp. 159-175.

11. Հայ -իրանական հարաբերությունները ժԹ դարի առաջին երեսնամյակում, Լևոն Խաչիկյան, 90, Նյու Յորք Մատենադարանի հիմնադիր տնօրենի ծննդյան ինստիտուտի նվիրված միջազգային գիտաժողովի (9-11 հոկտեմբերի 2008թ.), Երևան, 2010, էջ 182-190:

12. Իրանի պալատական պատմագիր Սարավին Աղա Մուհամմադ Խանի 1795թ. Ղարաբաղյան արշավանքի մասին, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXVIII, Երևան, 2011, էջ 336-349:

13. European Catholic Missionary Propaganda among the Armenian population of Safavid Iran, Iran and the World in the Safavid Age, London, New York, 2012, pp. 371-379.

14. Указы Ереванских ханов как источники истории армянского народа, Проблемы источниковедения, историографии и истории Востока, Луганск, ДЗ «ЛНУ имени Тараса Шевченко, 2013, сс. 111-117.

15. Խ. Արովեանի կենսագրութեան մի մասնիկը, Հայ կազեան հայ ազիտակ հանդէս, Բեյրութ, 2013 թ. 33, էջ 291-296:

16. Персоязычные писцы и переписчики Закавказья конца XVIII-начала XIX вв. Армения – Иран: История. Культура. Современные перспективы взаимодействия: Сборник статей (Моск. гос. университет им. М. В. Ломоносова, Ин-т стран Азии и Африки); [рук. проекта М. С. Мейер; сост. Б. С. Зулумян; редкол.: И. В. Иванов и др.], Москва; Ключ.-С., 2013, (с. 168), сс. 87-91.

17. Նոր Ջուղայի դերը իրանապատակ հայութեան իրաւունքների պաշտպանութեան գործում, Հանդէս Ամսօրեայ, Վիեննա-Երևան, 2015, թիւ 1-12, էջ 205-223:

18. Արցախի Առաջածոր գյուղի XVII-XVIII դարերի պատմությունը ըստ Մատենադարանի պարսկերեն վավերագրերի, Արևելագիտության շրջանում, Հայաստանում, հ. 1, Իրանագիտության արդի հիմնախնդիրները, Երևան, 2015, էջ 50-65:

19. Նոր Ջուղան Իրանի Նադիր շահի իշխանութեան շրջանում, Հանդէս Ամսօրեայ, Վիեննա-Երևան, 2016, թիւ 1-12, էջ 273-215:

20. Երեւանի խանութեան հայ մելիքները ժԹ. դարի սկզբին Հարաւային Կովկասի շուրջ ռուս-իրանական հակամարտութեան սրման շրջանում, Հանդէս Ամսօրեայ, Վիեննա-Երևան, 2017, թիւ 1-12, էջ 221-234:

21. Հայոց վանքերի ու բնակավայրերի անուանումները պարսկերեն վավերագրերում, Հայ կազեան հայ ազիտակ հանդէս, Բեյրութ, 2017 թ. 37, էջ 123-153:

КОСТИКЯН КРИСТИНЕ ПЕТРОСОВНА
ПЕРСИДСКИЕ ДОКУМЕНТЫ МАТЕНАДАРАНА КАК ПЕРВОИСТОЧНИКИ
ИСТОРИИ АРМЯН
(ВТОРАЯ ПОЛОВИНА XVII – ПЕРВАЯ ПОЛОВИНА XIX ВВ.)

Диссертация на соискание ученой степени доктора исторических наук по специальности 07.00.05 "Историография, источниковедение".

Защита состоится 19-го декабря, 2017 г. в 14⁰⁰, на заседании специализированного совета Истории Армении 004 ВАК РА при Институте Истории Национальной Академии Наук РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

В диссертационной работе проводится историко-источниковедческое исследование персидских документов Матенадарана второй половины XVII века до первой половины XIX века.

Сведения и данные изучаемых документов позволяют более пространно и глубоко изучить такие вопросы истории Армении и армяно-иранских отношений, как права и обязанности армян, а также политико-правовое состояние Армянской церкви под властью Ирана; проблемы вызванные правонарушениями местных мусульманских властей и механизмы урегулирования их; роль влиятельных деятелей Армянской церкви и Новой Джульфы в защите этих прав; дать более полную и обоснованную оценку шахской политике в отношении армян и Армянской церкви; дополнить и уточнить историю армянских меликских домов.

Работа состоит из предисловия, трех глав и приложения. В предисловии рассматриваются актуальность темы, цели и задачи, методологические основы, хронологические рамки и научная новизна исследования, а также проводится обзор использованной литературы.

Первая глава - **«Персидские документы Матенадарана второй половины XVII – первой половины XIX вв. как документы, запечатлевшие армяно-иранские отношения»** посвящена истории создания и изучения исследуемых документов: рассматривается и подчеркивается роль Армянской церкви и ее выдающихся деятелей, влиятельных лиц армянской колонии Новой Джульфы в приобретении важных документов. В разделах этой главы также исследуются историческая ценность документов относящиеся армянским меликам, обобщается информация относящееся к писарям и переписчикам персидских документов.

Во второй главе диссертации - **«Анализ данных персидских документов Матенадарана по истории армян второй половины XVII – первой половины XIX вв.»** исследуются вопросы, по которым рассматриваемые документы являются ценными источниками: права и обязанности армян-зиммиев, правовое положение, привилегии и внутренние проблемы Армянской церкви под властью Ирана, борьба ее видных деятелей против католической пропаганды.

Права и обязанности армян - зиммиев в общих чертах сформулированы в договорах заключенных с ними от имени пророка Мухаммада и Имама Али. Эти документы, копии которых создавались в период правления Сефевидов и

позднее, хранятся также в коллекции Матенадарана. Более четкое исследование прав и обязанностей армян-зиммиев, а также Армянской церкви проводится на основе шахских указов данного периода.

В этой главе выявляется ценность данных персидских документов для изучения социально-экономической истории Армянской церкви, особенностей отношений католиков с иранскими властями, налогов выплачиваемых ими под видом пишкашов (ежегодных и одновременных дарений) шахскому двору, коррупции являвшейся одной из первопричин появления псевдо-католиков претендующих на Святой Престол. В том же разделе на основании документов прослеживается также роль внешних вмешательств со стороны России и Ирана в борьбе католиков за Престол в начале XIX века.

Одной из тревожных проблем требующих незамедлительных противодействий Армянской церкви в XVII-XVIII веках была католическая миссионерская пропаганда среди армянского населения Ирана и принятие многими армянами католичества. На основе шахских указов Матенадарана и других архивных коллекций в последнем разделе исследуется шахская политика в этом вопросе, которая официально позволяла существования католических миссий в Иране, однако под давлением армянских католиков и других влиятельных деятелей, ограничивает их пропагандистскую деятельность среди армянского населения Ирана.

Третья глава - «Лингво-стилистические, структурные и терминологические особенности персидских документов Матенадарана второй половины XVII – первой половины XIX вв.» посвящена текстологическому анализу рассматриваемых документов, выявлению характерных структурных, лингвистических, стилистических и терминологических особенностей ее разновидностей в разные периоды. Богатый архивный материал Матенадарана позволяет дополнить международный опыт исследования таких документов новыми деталями и обобщениями о структуре, словарно-фразеологическом составе разных документов (указы Сефевидских, Афшаридских и Каджарских шахов, купчих и прочие шариатские документы), официальных инстанциях издающих и утверждающих эти документы. Проводится этимологический анализ имен армянских монастырей и селений в персидских документах, в результате чего выясняется что эти имена в некоторых случаях измененные вариации армянских имен, иногда их перевод на турецкий или новые имена, данные тюркскими племенами поселившимся в соседстве начиная с XI в. в соответствии с их представлениями. Персидские документы данного периода содержат обильный материал по истории армян этих селений и свидетельствуют о не изменении их этнической картины.

KRISTINE PETROS KOSTIKYAN

THE PERSIAN DOCUMENTS OF THE MATENADARAN AS SOURCES OF
THE HISTORY OF ARMENIANS
(SECOND HALF OF 17TH CENTURY – FIRST HALF OF 19TH CENTURY)

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of
“Historiography, sources study” 07.00.05

The defense of the dissertation will be held on December 19, 2017, 14⁰⁰ at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave 24/4).

SUMMARY

A historical and source-research work of the Persian documents composed in the period from the second half of 17th century to first half of 19th century is carried out in the dissertation.

The information and data of the above mentioned documents have allowed the author to study many problems of the history of Armenia and Armenian-Iranian relations more thoroughly. The problems investigated in the research are: the rights and duties of the Armenians and the Armenian Church under the rule of the Safavid, Afsharid and Qajar states; the role of the influential leaders of the Armenian Church and Armenian community of New Julfa in protection of those rights; problems caused by local Muslim officials and the mechanisms of their regulation; shah's policy as regards Armenian population and Armenian Church under its rule in various stages of the period, details and new data referring to the history of Armenian meliks, the last representatives of Armenian noblemen in Eastern Armenia.

The work consists of a preface, three chapters and an appendix. The actuality of the theme, the aim and objectives, the methodological basis, the chronological frames and scientific novelty of the work are presented in the preface, where also a review of the used literature is given.

The first chapter of the dissertation is entitled **“The Persian documents of the Matenadaran composed in the period from the second half of the 17th to the first half of the 19th centuries, as documents which have recorded the Armenian-Iranian relations”**. It is devoted to the history of the Persian documents of the Matenadaran, where the important role of the Armenian Church, its outstanding leaders, and the influential merchants of New Julfa in receiving the needed decrees and other documents is revealed. A section of this chapter deals with the history of the decrees granted to the Armenian meliks and the evaluation of the information of those documents. The next section summarizes the information of the documents and other sources about the scribes and copyists of the Persian documents.

The second chapter of the dissertation - **“The study of the information of the Persian documents of Matenadaran referring to the Armenian history in the second half of the 17th and first half of the 19th centuries”** contains a research on the problems where the documents are first-hand sources. These problems are the rights and duties of the Armenian dhimmis, the rights, the privileges and inner problems of the Armenian Church under rule of Iran, the struggle of its outstanding leaders against Catholic propaganda.

The rights and the duties of the Armenian dhimmis in the bare outlines are formulated in the treaties concluded with them on behalf of the Prophet Muhammad and Imam Ali. These documents survived in Safavid and later period

copies are kept in the Archive of the Matenadaran as well as in other libraries of the world. Nevertheless, a more precise and detailed research on the rights and duties of the Armenian dhimmis may be carried out on the basis of the royal decrees of the period.

This chapter reveals the importance of the information of the Persian documents for researches on the social-economic history of the Armenian church, inner peculiarities of the relations of the catholicoses with Iranian powers, the taxes paid by them as pishkashes, the corruption and bribery in the Iranian government being a reason for appearance of new pretenders - the pseudo-catholicoses to the throne of Holy See. The chapter also elucidates the role of outer Iranian and Russian powers in the struggle for the throne of the Holy See at the beginning of the 19th century.

One of the dangerous and urgent problems for the Armenian Church was the catholic missionary propaganda among Armenian population of Iran and as a result, the conversion of many Armenians to Catholicism. In the last section of the chapter the royal policy in this aspect is researched on the basis of shahs' decrees kept in the Matenadaran and archives of Iran. The research reveals the facts that in spite of the official permission given by shahs concerning the existence of the Catholic missions in Iran, nevertheless under the pressure of the Armenian high clergymen their missionary activities among Armenian population were partially restrained.

The third chapter - **“The linguistic-stylistic, structural and terminological characteristic features of the Persian documents of the Matenadaran, composed in the second half of the 17th and first half of the 19th century”** is devoted to the textological analysis of the documents, the study of the structural, linguistic, stylistic and terminological characteristic features of various types of documents in different phases of history. The rich archival material of the Matenadaran has allowed to enrich the international experience of the study of Persian documents (decrees of Safavid, Afsharid and Qajar shahs, deeds of purchase and other shar'iyyah documents) with new details and conclusions referring to the word and phrase structural features, the official instances issuing and confirming them. An etymological analysis of the names given to the Armenian monasteries and settlements in the Persian documents is accomplished in a section of this chapter. In result, the following conclusion was achieved: that a portion of the names was a changed version of the Armenian prototypes, a portion – derived from simple translation of the names in Turkish, some names were new ones given to the settlements in accordance with the understanding and imagination of the Turkish tribes and their leaders which started settling in neighborhood since 11th century. The researched Persian documents contain a vast material about the history of the Armenian population of the settlements recorded with strange Perso-Turkicized names and have kept evidences about the lack of any changes in their ethnic composition.